

եմուտ Ստամպոլ հայ, ոչ թէ բնակիլ այլ եւ
 պէղիբկան չթողուին. եւ յորժամ Տաճիկքն
 առին, ապա հրաւիրօք եւ խնդիրքով ի բա-
 դում գաւառաց բերին զՀայք Ստամպոլ, որ-
 125 պէս եւ ի Լեհ եւ այլ տեղիս: Նաեւ մեծ եւ
 փառաւոր զեկեղեցիս առին Տաճիկք ի Հոռո-
 մոց եւ ետուն Հայոց. փա՛ռք Աստուծոյ: Ոչ
 զիտեմ թէ ինչ շնորհաց է այս, զի ամենայն
 ազգ սիրեն զմեզ՝ հաւատացեալք եւ անհա-
 130 ւատք, բայց հոռմէն. թէպէտ ազգս մեր ան-
 միաբան եւ սէր չունին՝ որպէս եւ անունն իսկ
 յայտնէ:

ԿՕԶԱԼ ՀԻՍԱՐ

Եւ անտի ելեալ անցանելով բազում կղզիս
 եւ լերինք եւ մշքու ատանին — ուստի մալ-
 մաղիայ, մշկէթ եւ այլ ազնիւ գինիք կ'ելնեն
 — հասաք ի ՍՍԻԸԶ քաղաք. բայց ներս ոչ
 5 մտաք, ուստի ելանէ ազնիւ աթլազ, քամխայ
 եւ թօռ խուչախք եւ սախզն որ է մազտաքէ,
 սպիտակ եւ ազնիւն անտի ելնէ: Եւ կրկին
 իԶՄԻՌ քաղաք. անդ ծախեցի սակաւ մի
 քսուր: Անտի անցայ ԹԻՐԱՅ. եւ անտ եւս
 10 նաղտեցի զէսպապս. եւ կամեցայ ԿՕԶԱԼ-
 ՀԻՍԱՐ զնալ. զինչ դրամ ունէի եւ թօնվանի
 եւ թէսպէհնի եւ ճամատանով զբեանքս թողի
 մօտ տօլվաթվոր մի ի խանն՝ Կիրակոս ա-
 նուն, որ էր ընչաւէտ. եւ ես չուեցի: Եւ
 15 Կօղալ-Հիսարու հաւան խիստ զէջ էր, առաւ

122 տաճիկ:

9 անցա: — 10 կամեցա: